1925

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

ԳՈՒՐԳԵՆ ՀԱՅԿՈՒՆԻ

ՏԻՏԱՆ

ՊՐՈԼԵՏ - ԳՐՈՂՆԵՐԻ ԱՍՍՈՑԻԱՑԻԱ

Գ Ո Ւ Ր Գ Ե Ն Հ Ա Յ Կ Ո Ւ Ն Ի

Լ Ո Ւ Յ Ս Ե Ն Տ Ե Ս Ե Լ

ՄԱՆԿԱԿԱՆ. Չափածո—

1. Դերձակ Աղվեսը	1911	Թիֆլիզ.	սպառված
2. Աքլորի դատը	1912	»	»
3. Չղջիկ	1912	»	»

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ.—

4. Սամել Հովիկ	1912	»	»
5. Անպարտ երգեր	1915	Մոսկվա	»
6. Գարնանային հովեր	1915	Թիֆլիզ	»
7. Արշալույսի յերգեր	1917	»	»
8. Բանաստեղծություններ	1920	Մոսկվա	»
9. Արծվի խնջույքը	1921	Թիֆլիզ	»
10. Տիտան (գրավված մենշևիկներից)	1921	»	»
11. Արծվի խնջույքը	1922	Մոսկվա	»
12. Տիտան	1922	»	»
13. Գողգոթա	1922	»	»
14. 5 Պոեմ	1922	»	»
15. Գիշերային թիթեռնիկ	1923	»	»
16. Բանաստեղծ. Հ. I	1923	»	»
17. Վուլկանները ժայթքում են . .	1924	»	
18. Մասիս	1925	Թիֆլիզ	»
19. Տիտան	1925	»	

ՀԿ-166ա
19 NOV 2011
891.99
Հ-26
2393

ԳՈՒՐԳԵՆ ՀԱՅԿՈՒՆԻ

Տ Ի Տ Ա Ն

Պ Ո Ե Մ

ՉՈՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹԻՖԼԻՍ 1925

Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
40040-63

Главлит № 2169 Тифлис. Тираж 2000
Ժ. Տ. Գ. Խ. Պոլիգր. Տփխիսի 4-րդ տպարան, Պուշկ. № 3 փ.

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Գնա՛ իմ Պոեմ,
Մտի՛ր յեկ ամեն տեղ,
Մտի՛ր ամեն տուն, ամեն մի անկյուն,
Ուր էլ վոր լինի,
Ով էլ վոր լինի—
Դու տես ամենքին.
Ով վոր իր հալալ քրտինքն ե թափում,
Ով վոր մեր հալալ քրտինքն ե լափում։

Գնա՛ իմ Պոեմ.
Ծնվել ես Դու իմ անլուր զրկանքից,
Ծնվել ես Դու իմ հասուն արգանդից.
Ծնվել ես և Դու անհատակ կյանքից —
Դարերով կերտված
Հսկա քաղաքում։

Գնա՜ իմ Գոեմ.
Կերտել եմ յես Քեզ —
Դարերի ծնունդ
Իմ ըմբոստ Հոգու, իմ փայլուն Մտքի,
Իմ հզոր Կամքի
Անմահ տաղանդով։

Գնա՜ իմ Գոեմ.
Կերտել եմ յես Քեզ—
Դարերի ծնունդ իմ Կարմիր Դրչով,
Վոր Հոկտեմբերյան թեժ լավայի մեջ
Թաթխել եմ արդեն.
Վոր հեղեղի պես՝ արյունս ե ժայթքում.
Ցեվ պատգամներս,
Շարան ու շարան,
Բանվոր մասսային բաշխում ե անվերջ։

1.

Դյութական քաղաք!
Յերբ աշտարակից
Ամբարթ հայացքով դիտում եմ չորս կողմ,
Իմ վոտքերի տակ.
Ու տեսնում եմ յես
Դեպ հեռուն ձգվող արվարձանների
Հազիվ նշմարվող
Քո նուրբ գծերը մշուշների մեջ.

Զգում եմ, զգում,
Թե ինչ մեծություն Գալիք Որերի
Խոստանում են քեզ—
Արվարձանները քո։

Դյութական քաղաք!
Յերբ անցնում եմ յես
Ծաղկուն, ծառաշատ
Քո կանաչազարդ լայն փողոցներով.
Ու տեսնում եմ յես—
Աերոպլանները,
Ոդում սավառնող.
Բյուր վելոսիպետ, կառք, մոտոցիկլետ,
Ավտոմոբիլներ.
Ցեվ ելեկտրաքարշ ու շոգեկառքեր
Ցերկաթուղիով առաջ սլացող։

Յերբ լսում եմ յես
Զարկեր ու սուլոց,
Գոռում ու գոչում, անդուլ աղաղակ
Թնդում է ուժգին...

Զգում եմ, զգում,
Խաժամուժ քաղաք!
Թե պալենական գեղջուկ խոսքերով
Ո՞վ կարե յերգել ժխորդ ներքին,
Վոր հիմակ-հիմա
Մրցում է արդեն և խենթ տարերքին։

Խաժամուժ քաղաք!

Յերբ տեսնում եմ յես
Մարմար, գրանիտե հսկա սյուներով
Պալատ ու ամրոց.
«Սրբության տաճար» յեկեղեցիներ —
Գոռոզ ու փքուն.
«Գեղեցկության բեմ—թատրոններ մեծ»
Պալատների ցոփ, տռփալից սիրո
Յեվ աշխարհակալ նվաճումների
Դրվատումներով.
Բրոնզե կոթողներ և հուշարձաններ —
Բռնակալներին անմահացնելու։
Ոթելներ ու ցիրկ
Յեռուն կրքերի
Յեվ անասնական ըմբշամարտի վայր.
Համալսարան —
Պալատներին կից.
Մատենադարան —
Ցեցի կերակուր փոշոտ գրքերով.
Մուզեները սին.
Յեվ կայարաններ, պոստ, հեռագրատուն
Աշխարհը պատող լաբյուրինթ ցանցով,
Գարշ կապիտալի նյարդերը յերկաթ.

Կամուրջները հաղթ.
Բերդերն էլ դաժան,
Ժայռերից խոժոռ,
Յերկինք են ցցված.

Գիտեմ, յես գիտեմ,
Ե՞յ դու անափառ, բուրժվական քաղաք,
Դեռ Որեր կը գան,
Յերբ,
Քիթդ հիմա դեպի վեր ցցած,
Պետք է վոր մի որ չոքես իմ առաջ։

Բուրժվական քաղաք!
Յերբ տեսնում եմ յես
Շուկա և կրպակ ու վաճառատուն.
«Ազատ առևտուր» —
Ալան ու թալան...
Խարդախված մթերք,
Գողություն ու սուտ.
Անդադար յերգում՝ «աստված է վկա»...

Յեվ տեսնում եմ յես
Գրպանները հաստ վաճառականներ
Ամեն կերպի,
Յերկյուղած, պարկեշտ...
Մոմեր են վառում սրբերի առաջ.
Աջհամբույր տալիս
Տերտեր, վարդապետ, յեպիսկոպոսին
Յեվ սրբազնագույն կաթողիկոսին,
Վոր աղոթքներում,
Վոսկու հնչյունով,
Սրանք
«Ջերմեռանդ գթություն հայցեն
«Անեղ Արարչից.
«Քավություն մեղաց...
Չարչի, բազազին. —

Գիտեմ, յես գիտեմ,
Ե՜յ, քավթառ կյանքի, դու, յեզվիտ քաղաք,
Բանի՞ ու քանի միամիտ սերունդ,
Կրոն ոպիումով,
Կեղեքել ես դու
Դարեր և դարեր։

Ոպիումի քաղաք!
Ցերբ տեսնում եմ յես
Կախարդիչ վոսկու տենչերով հարբած—
Բիրժա են վազում պարագիտ, մակլեր...
Դիվահար, անքուն.
Փնտռող հայացքով,
Ստրամանկ ու նենգ.
Բորսայում ինչպես շարժում, յեռ ու զեռ.
Գերբնական ուժով աճող ակցիաներ...
Գահավիժորեն ընկնում են հանկարծ...
Հրճվանք ու սարսափ իրար հաջորդում։
Այստեղ հրճվանքից,
Այնտեղ սարսափից՝ խելագար խմբեր։
Որենքին հաճո
Թալանի մրցում զենիթին հասած.
Ցեռուն ածիոտաժ...

Ցերբ տեսնում եմ յես
Ամեն արդ ու զարդ,
Վոսկին ու արծաթ, պլատին ու զոհար...
Ամեն կողմերից
Բանկերդ են հոսում։
Համայն նյութեղեն, հոգեղեն կյանքի
Հանգույցը կենտրոն
Հզոր բանկերիդ սուր ճիրաններում։
Յեվ տեսնում եմ յես
Գոռող արքաներ, իշխան, նախարար—
Բանկերիդ լակեյ։
Մարզված, զինավառ, ահեղ բանակներ

Ամեն ժամ պատրաստ—
Բանկերիդ կամքով
Վազելու դեպի արնաներկ կռիվ։
Յեվ գոռ բանկերիդ նավերը խումբ-խումբ
Լողում են հեռու,
Աշխարհիս բոլոր ովկիանոսներում։

Դավեր ու ինտրիգ,
Լկտի արշավանք դեպի գաղութներ...
Արյուն-պատերազմ, ավեր ու սարսափ—
Բանկերիդ ծնունդ։
Բանկերդ են իշխում աշխարհի վրա։

Ասում եմ, լսիր,
Ո՞վ դու ինտրիգան, դավերի քաղաք,
Դեռ Որեր կը գան,
Ցերբ մեկ հարվածով
Յես պետք է բանամ ու բուժեմ ընդմիշտ
Բուրժվական կյանքիդ
Թարախը յերկրիս։

Դավերի քաղաք!

Ցերբ տեսնում եմ յես
Վոճիր ու տերրոր, անարեկումներ.
Ույժը—
Իրավունք.
Բանտ, շղթա, աքսոր, արյուն, կախաղան—
Թույլերի համար։
Դատարանը լոկ անամոթ կեղծիք.
Յուրիսպրուդենցիան—
Կեղեքման արվեստ։
Իրավագետներն մի մի խրավիլակ,
Յավիտյան սոփեստ.
Բութ, արծաթասեր և պնակալեզ.
Վերին՝ խավերի գործիքները մութ!..

Յեվ տեսնում եմ յես—
Ինտելիգենցիան...
Ինժեներ, բժիշկ, գիտուն պրոֆեսոր—
Անճար ու անգետ.
Շողոքորթ զրչի տխմար քննադատ.
Անտաղանդ հոգու անյույս բանաստեղծ.
Քծնող դերասան և անյույզ յերգիչ.
Բոլորն հացկատակ.
Յեվ դեղին մամուլն ամենից անարգ...

Յերբ տեսնում եմ յես
Շուք, փայլ ու պճրանք և կյանքը շվայտ.
Անվերջ թղթախաղ.
Քեֆեր ու խրախճանք.
Պարահանդեսներ.—
Զեղխ ու անառակ։
Ելեկտրականության լույսով հեղեղված
Կաֆե—բեստորան
Ծայրից ծայր լեցուն այցելուներով.
Շամպայն ու լիկեոր հոսում են առատ.
Լափում են, լակում.
Ճաղատ գլուխներ, բթամիտ դեմքեր,
Սիֆիլիտիկներ,
Սափրած, լպստուն.
Ճարպոտ աչքերում
Դիվական ժպիտ, անասնական կիրք—
Տուփանք և յեռում.
Կանայք զարդարուն
Յեվ անուշահոտ յուղերով ոծված,
Ունք, յերես, շրթունք ներկերով ծեփած.
Կուրծքերն հոլանի...
Կոկետ ու կրքոտ դյութում են ցինիկ.
Ու կանչում են հեղ...
Աչքով և ունքով։
Ու կանչում են ինձ...
Յեվ կանչում են ձեզ...

Յեվ անցնում եմ յես
Բանուկ փողոցի ասֆալտ մայթերով,
Ուր պոռնիկ կանայք,
Վաճառքի յելած,
Արձակ—համարձակ կանչում են խռպոտ...
Դեպի մոտակա անշուք համարներ...
Վաղվան ապրուստի կանխիկ վճարով,
Իրենք անզգա,
Յաղուրդ տալու ինձ...
Յաղուրդ տալու ձեզ...

Զգում եմ, զգում,
Ո՜վ դու անառակ, շողշողուն քաղաք,
Թե ինչ դիվական ուժեր կան քո մեջ։
Ինչքան առատ թույն,
Կաթիլ ու կաթիլ,
Ամեն, ամեն որ,
Լեցնում ես դու իմ յերակների մեջ։
Իմ առողջ հոգին,
Իմ միտքը պայծառ, իմ կամքը յերկաթ—
Մշուշն ե պատում,
Մշուշը փառքի, փայլքի առփանքի...
Ու յես անշմար,
Թույնովդ արբած,
Ասես թե արդեն թաղվում եմ քիչ—քիչ
Քո նուրբ վոստայնի թավուտ ցանցերում...
Ու թվում ե քեզ,
Վոր խեղդվում եմ յես.
Վոր ել ինձ համար չը կա փրկություն...
Բայց չե՜,
Մեկ նայիր!...

2.

Քո շքեղ կրծքից—
Անշուք,
Բայց խրոխտ վեր են բարձրանում
Գործարանների
Ծխնելույզները աշտարակաձև.
Քուլա և քուլա ծուխ ու գոլորշին,
Կայծերի խուրձեր
Թանձր շերտերով
Ծածկում են արդեն հորիզոններդ.
Ու այնպես անվախ—
Անձրևով, կեղտ ու մուր
Թքում են վերից փառահեղ դեմքիդ.
Մինչ ցնծում ես դու.
Յեվ ցնծում եմ յես...

Յերբ տեսնում եմ յես—
Քո խակ արգանդում,
Գործարանների կամարների տակ,
Հսկա անիվներ
Պտույտ են գալիս կատաղի թափով.
Ու նրանց թափից
Շենքերդ հզոր դողում են հիմքից
Թրթռում եմ յես...

Յեվ տեսնում եմ յես—
Դիվական ուժերդ,

Անթիվ վիներով,
Մեկիկ ու մեկիկ մեխվում են այնտեղ,
Մեքենաներին.
Դիվական ուժերդ
Անմար հնոցում կրակ են վառում.
Լափում են փոսկի, պլատին ու արծաթ,
Յերկաթը ագնիվ, պղինձ ու կապար...
Զուլում են դրամ.
Յեվ մահու զենքեր—
Քո փառքի համար.
Թնդանոթ ու ռումբ,
Հրացան ու փամփուշտ, սվին ու սուսեր.
Վորոնք վոր մի որ,
Անմահ մի որ,
Պիտի վորոտան, մռնչան քո դեմ...

Ու լսում եմ յես
Միլիարդ դարկերի չարագուժ համերգ
Թնդում և ահա քո դեմ հանդիման...
Այլասեռ հոգուդ անբմբռնելի.
Հոգուս՝ հարազատ։

Յեվ տեսնում եմ յես գործարաններում
Ամեն ակնթարթ,
Ամեն շարժումով,
Ամեն զարկի հետ,
Միլիոն կին ու մարդ վառում են նոր կյանք
Արյուն-քրտինքով...

Ո սուրբ Աշխատանք,
Վոր ամեն բարիք ծնում ես Այսոր
Մուրճի հարվածով,
Տանջանքի բովից.
Վոր վսեմ վաղվան երջանիկ որեր
Մարդկության համար
Դարբնում ես այստեղ, գործարաններում,
Ես քեզ եմ սիրում
Ու պաշտում եմ քեզ...

Յեվ լսում եմ յես—
Արտակարգ ժամին
Դավաղիր հոգով շչակն ե սուլում—
Մեռնող քաղաքի Գուժկանն ահավոր.
Ծնվող քաղաքի նոր Ավետաբեր.
Գուժում ե անդուլ—
Դո՜ւլ, դո՜ւլ, գործադո՜ւլ...

Ահա ակնթարթ...

Ու տեսնում եմ յես
Դաժան Ամբոխի գլուխների ծո՜վ.
Փողոց, գործարան—
Ձուլվել են իրար.
Ձուլվում եմ և յես Ամբոխի գրկում...

Ահռելի միտինգ!

Բանվոր դասակարգ:
Կուրծքերը արձակ.
Բազուկները վեր.
Զայրույթը հոգու բռունցքներ կազմած.
Մասսայի ծնունդ հռետորները գիլ
Կրա՜կ են թափում հրդեհ շուրթերից.
Վառում մասսային,
Վառվում մասսայից.
Մասսան ե յեռում կաթսայի նման.
Յեռում եմ և յես.
Յեվ վեր եմ թռչում կաթսայի շոգուց.
Բորբոքում կրակն ամենքի հոգում.
Ամենքի հոգին ձուլվա՜ծ իմ հոգուն.
Իմ հոգին ձուլված Ամենքի հոգուն...

Ու լսում եմ յես,
Վոր թնդում ե վեր—
Ինտերնացիոնալ,
Հաղթական քայլերգ!

Ծածանում ե սեգ
Արնագույն դրոշ:
Շարժվում են տներ.
Շարժվում ե փողոց.
Քաղաքից էլ մեծ Ամբոխը հիմա
Քայլում ե ըմբոստ,
Քայլում եմ և յես. քայլում եմ ըմբոստ:

Ու տեսնում եմ յես—
Վոսոխների դեմ դեպ վերջին պայքար
Վազում ե Մասսան:

Մեռնող կապիտալ—վարձկան գնդերով,
Անմահ աշխատանք—Կարմիր Բանակով,
Վոսոխ ու Ամբոխ—
Շանթում են իրար...

Հուր, բոց ու կրա՜կ.
Սուր, կոծ, աղաղակ.
Շաչյուն ու դոփյուն.
Ռազմական ժխոր—
Դիվական համերգ,
Քաղաքն ե թնդում!

Սարերից հսկա ալիքների պես
Ուժգին շառաչով բաղխվում են իրար.
Քրտինքի մտած—
Փրփուր են թքում,
Ծնչում հևիհև...

Յեվ յերկու տիտան—Վիշապ, Աժդահան,
Կատաղի թափով գրոհ են տալիս.
Գրոհ են տալիս... ու հետ նահանջում...
Նորանոր ուժով
Վճռական կովում բաղխվելու կրկին,
Հզոր քաղաքից տիրելու յերկրին:

Յեվ ես պարզատես, իմ Մարքսյան մաքով
Տեսնում եմ արդեն,
Վոր դու,
Անառակ,
Մեռնող Կապիտալ,
Վարձկան ուժերով
Մաքառել Այսոր ըմբոստ քաղաքում—

Անզոր ես, անզոր!

ՎԵՐՋԵՐԳԱՆՔ

Թռիր իմ Պոեմ, աննմա՛ն Պոեմ.
Ճախրիր ամեն տեղ.
Ամեն մի յերկրի յերկնակամարում
Ջայնիր Դու իրոխա՛!

Թռիր իմ Պոեմ—
Միլիոն ու միլիարդ սավառնակներով.
Յերկրիս յերկնատես գագաթներից վեր.
Տիեզերական անհունության մեջ
Կայծակի թափով ոլորիր հավետ.
Անհասանելի Քո բարձրունքներից,
Վորոտից ել խենթ,
Թնդա Դու այն Որ.—

«Սուրբ աշխատանքի,
«Կոմմունիստական Ըմբոստացումի
«Հաղթական ժամին—

«ՎՈՂՋՈՒՅՆ ԱՄԵՆՔԻՆ!

Մոսկվա, Փետրվար, 1920

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZOON-Հայ ՍՍՀ
Ա. Մասիսյանի անվան

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—

20. Ռուսաստ. Կոմ. Կուս. Ծրագիրը .	1919	Մոսկվա	սպառված
21. Կոմմուն. Ինտերն. մանիֆեստը .	1919	»	»
22. Կոմմուն. Ինտերն. պլատֆորմը .	1919	»	»
23. Լերմոնտով. Փախստական . . .	1920	»	»
24. Ինտեր. Վարշավյանկա, Մարսելիեզ	1922	»	»
25. Ուոտ Ոյտմեն. բանաստեղծ. . . .	1923	»	»
26. Մաքսիմ Գորկի.—Մայրը . . .	1923	»	
27. Ա. Բոգդանով.—Ինժեներ Մեննի	1923	»	

ԳԱՂԱՐԱԿԱՆ.—

28. Հայաստանի Կոմմուն. Կուս. Ներկայացուցչի դեկուցումը Կոմինտերնին	1919	Մոսկվա	»
29. Ազգային Ինքնորոշումը և Կոմմունիստները	1919	»	»
30. Պրոլետ. հեղափոխությունը և Արմենիայի բոլշևիկները	1919	»	»

Պատրաստ է տպագրության համար
ԳՈՒՐԳԵՆ ՀԱՅԿՈՒՆԻ
ԿԱՐՄԻՐ ՀՐԵՇ
Հոկտեմբերյան պոեմ
50 յերգ

925
ARM
4-166

1924—1925

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ.—

Ց Ի Ց Ա Ն. Գեմ.

ՎՈՒԼԿԱՆՆԵՐԸ ԺԱՅԹՅՈՒՄ ԵՆ. Գեմ.

ՊԱՏՐԱՍՏ Է ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ.—

ԿԱՐՄԻՐ ՀՐԵՇ. Գեմ.

Հեղինակի հասցեն.—
Москва. Арбат, Староконюшенный 33, кв. 3.

20 ԿՈՊ.

Հր 1
ԶՄ 0

«Ազգային գրադարան»
NL0349832

37915

4-166a

891.99
L-26